ContourGlobal
Հիդրո կասկադ

Հայտարարություն մրցույթի մասին

Մրցույթի համարը 03/21

Պատվիրատուն՝ «ՔոնթուրԳլոբալ Հիդրո կասկադ» ՓԲԸ-ն, որը գտնվում է  ք. Գորիս, Գր.

Տաթեւացու 2 հասցեում, հայտարարում է Մրցույթ:

Մրցույթում հաղթող ճանաչված մասնակցին սահմանված կարգով կառաջարկվի կնքել «ՔոնթուրԳլոբալ հիդրո կասկադ» ՓԲԸ-ի կարիքների համար մետաղամշակման հաստոցների ձեռքբերման գնման պայմանագիր (այսուհետեւ՝ պայմանագիր):

Ապրանքների մատակարարումն անհրաժեշտ է իրականացնել պայմանագրի երկկողմանի կնքման պահից 90 օրացուցային օրվա ընթացքում: Ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի մրցույթին մասնակցելու հավասար իրավունք, բացառությամբ «ՔոնթուրԳլոբալ հիդրոկասկադ» ՓԲԸ-ի մատակարարների /կապալառուների եւ երրորդ կողմի աշխատանքներ/ (ծառայություններ մատուցողի) կատարողի ներգրավման քաղաքականության պահանջների: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող՝ **Տեխնիկական առաջարկ, Մասնագիտական փորձառություն, Ֆինանսական միջոցներ, Աշխատանքային ռեսուրսներ, Տեխնիկական միջոցներ**: Ընտրված մասնակիցը որոշվում է սահմանված պահանջներին բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով, որի հետ կնքվում է պայմանագիր: Պայմանագրի համար վճարումը կիրականացվի Կատարողին առաջարկվող պայմանագրի նախագծում սահմանված կարգով: Սույն ընթացակարգի հրավերը ստանալու համար անհրաժեշտ է դիմել պատվիրատուին, մինչեւ սույն մրցույթի հայտերի (տեխնիկական առաջարկ) բացման նիստը: Ընդ որում, փաստաթղթային ձեւով հրավեր ստանալու համար պատվիրատուին պետք է ներկայացնել գրավոր դիմում: Պատվիրատուն ապահովում է փաստաթղթային ձեւով հրավերի տրամադրումն անվճար այդպիսի պահանջ ստանալուն հաջորդող աշխատանքային օրը: Էլեկտրոնային ձեւով հրավեր տրամադրելու պահանջի դեպքում պատվիրատուն ապահովում է հրավերի՝ էլեկտրոնային ձեւով տրամադրումը դիմումն ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում: Սույն հրավերով նախատեսված կարգով հրավեր չստանալը չի սահմանափակում մասնակցի՝ սույն ընթացակարգին մասնակցելու իրավունքը: Մրցույթի առաջարկները (տեխնիկական) անհրաժեշտ է ներկայացնել քաղաք Գորիս, Գր. Տաթեւացու 2  հասցեով, փաստաթղթային ձեւով **մինչեւ 2021թ. փետրվարի 26-ը, ժամը 10:00,** եւ դրանք պետք է կազմված լինեն հայերեն կամ անգլերեն: Տեխնիկական առաջարկն ուսումնասիրելուց եւ հաստատելուց հետո Հանձնաժողովի քարտուղարը մասնակիցներին ուղարկում է հրավեր գնային առաջարկները ներկայացնելու համար: Հայտերի (տեխնիկական առաջարկների) բացումը տեղի կունենա քաղաք Գորիս, Գր. Տաթեւացու 2 հասցեում, **2021թ. փետրվարի 26-ին ժամը 10:00-ին:** Մասնակիցների **Տեխնիկական փորձի, Անձնակազմի, Նույնանման պայմանագրերի իրականացման փորձի, տեխնիկական միջոցների** վերաբերյալ պայմաններին համապատասխանությունը գնահատելու համար մասնակիցները հայտով (տեխնիկական առաջարկ) պետք է պատվիրատուին ներկայացնեն սույն ընթացակարգի հրավերով նախատեսված փաստաթղթեր:

ContourGlobal

Հիդրո կասկադ

Գնումները իրականացվում են Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2020 թվականի օգոստոսի 19-ի 273 Ա որոշմամբ և «ՔոնթուրԳլոբալ Հիդրո կասկադ» ՓԲԸ-ի գնումների ընթացակարգի համաձայն, որը կարող եք գտնել սույն հղումով.

https://eservices.contourglobal.eu/armenia/

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների գծով մասնագետ Ա. Նիկոլայանին:

**Հեռախոս՝ 0284 50022**

**Էլ. փոստ arevik.nikolayan@contourglobal.com**

**Պատվիրատու՝ «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ**

*«ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ*

# Հ Ր Ա Վ Ե Ր

«ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ի կարիքների համար մետաղամշակման հաստոցների ձեռքբերման նպատակով հայտարարված մրցույթի

Սույն հրավերը տրամադրվում է ի լրումն «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ի, (այսուհետև՝ Պատվիրատու)՝ կարիքների համար՝ մետաղամշակման հաստոցների ձեռքբերման նպատակով 03/21 եզակի հղման համարով անցկացվող մրցույթի ընթացակարգի (այսուհետև՝ ընթացակարգ) հայտարարության:

Սույն հրավերը կազմվել է «ՔոնթուրԳլոբալ հիդրո կասկադ» ՓԲԸ-ի Գնումների ընթացակարգի, Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2020 թվականի օգոստոսի 19-ի 273 Ա որոշմամբ և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան և նպատակ ունի Պատվիրատուի կողմից հայտարարված ընթացակարգին մասնակցելու մտադրություն ունեցող անձանց (այսուհետև՝ Մասնակից) տեղեկացնելու ընթացակարգի պայմանների՝ գնման առարկայի, ընթացակարգի անցկացման, հաղթողին որոշելու և նրա հետ պայմանագիր կնքելու մասին, ինչպես նաև օժանդակելու ընթացակարգի հայտը պատրաստելիս:

Սույն ընթացակարգի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը, «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ի գնումների ընթացակարգը: Սույն ընթացակարգի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

«ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ի գնումների բաժնի պատասխանատու անձի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ arevik.nikolayan@contourglobal.com

# ՄԱՍ I

## 1. ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՅԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Գնման առարկա է հանդիսանում «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ի կարիքների համար մետաղամշակման հաստոցների ձեռքբերումը, որոնք խմբավորված են «2» չափաբաժիններում`.

| համարը | Ապրանքի անվանումը | Քանակը |
|---|---|---|
| **1** | **խառատապտուտակահան հաստոց** | 1 |
| **2** | **Ունիվերսալ ֆրեզերային հաստոց** | 1 |

**Մետաղամշակման հաստոցների** ձեռքբերման տեխնիկական բնութագրերը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի ՄԱՍ 2:

Մասնակիցը կարող է հայտ ներկայացնել ինչպես յուրաքանչյուր չափաբաժնի, այնպես էլ բոլոր չափաբաժիններ համար:

## 2. ՄԱՍՆԱԿՑԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ, ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

2.1 Սույն ընթացակարգին մասնակցելու իրավունք չունեն անձինք.

1) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ դատական կարգով ճանաչվել են սնանկ կամ առկա է սնանկության վտանգի վարույթ.

2) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն ժամկետանց պարտավորություններ.

3) որոնք կամ որոնց գործադիր մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու օրվան նախորդող երեք տարիների ընթացքում դատապարտված է եղել ահաբեկչության ֆինանսավորման, երեխայի շահագործման կամ մարդկային թրաֆիքինգ ներառող հանցագործության, հանցավոր համագործակցություն ստեղծելու կամ դրան մասնակցելու, կաշառք ստանալու, կաշառք տալու կամ կաշառքի միջնորդության և օրենքով նախատեսված տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված է.

4) որոնց վերաբերյալ հայտը ներկայացվելու օրվան նախորդող մեկ տարվա ընթացքում առկա է օրենքով սահմանված կարգով կայացված անբողոքարկելի վարչական ակտ՝ գնումների ոլորտում հակամրցակցային համաձայնության կամ գերիշխող դիրքի չարաշահման համար.

5) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են Եվրասիական տնտեսական միությանն անդամակցող երկրների գնումների մասին օրենսդրության համաձայն հրապարակված գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում.

6) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ի և ՀՀ Ֆինանսների նախարարության գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ընդ որում, եթե մասնակիցը սույն կետի 5-րդ և 6-րդ ենթակետերով նախատեսված ցուցակներում ներառվել է հայտը ներկայացնելու օրվանից հետո, ապա նրա տվյալ հայտը ենթակա չէ մերժման:

2.2 Մասնակցության իրավունքի գնահատման համար մասնակիցը հայտով պետք է ներկայացնի իր կողմից հաստատված գրավոր հայտարարություն:

2.3 Արգելվում է սույն կետով սահմանված փոխկապակցված անձանց և (կամ) միևնույն անձի (անձանց) կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս միևնույն անձի

(անձանց) պատկանող բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը սույն ընթացակարգին, բացառությամբ պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների և (կամ) համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) գնումների գործընթացին մասնակցության դեպքերի:

1) ֆիզիկական անձինք համարվում են փոխկապակցված, եթե նրանք միևնույն ընտանիքի անդամ են, կամ վարում են ընդհանուր տնտեսություն, կամ համատեղ ձեռնարկատիրական գործունեություն, կամ գործել են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից,

2) ֆիզիկական և իրավաբանական անձինք համարվում են փոխկապակցված, եթե նրանք գործել են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից, կամ եթե տվյալ ֆիզիկական անձը կամ նրա ընտանիքի անդամը հանդիսանում է՝

ա. տվյալ իրավաբանական անձի բաժնետոմսերի տասը տոկոսից ավելին տնօրինող մասնակից.

բ. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ ձևով իրավաբանական անձի որոշումները կանխորոշելու հնարավորություն ունեցող անձ.

գ. տվյալ իրավաբանական անձի խորհրդի նախագահ, խորհրդի նախագահի տեղակալ, խորհրդի անդամ, գործադիր տնօրեն, նրա տեղակալ, գործադիր մարմնի գործառույթներ իրականացնող կոլեգիալ մարմնի նախագահ, անդամ.

դ. իրավաբանական անձի այնպիսի աշխատակից, որն աշխատում է գործադիր տնօրենի անմիջական ղեկավարության ներքո կամ իրավաբանական անձի կառավարման մարմինների կողմից որոշումների կայացման հարցում որևէ էական ազդեցություն ունի.

3) ֆիզիկական անձի կարգավիճակ չունեցող մասնակիցները համարվում են փոխկապակցված, եթե՝

ա. տվյալ անձը քվեարկելու իրավունքով տիրապետում է մյուսի՝ ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի, այսուհետ՝ բաժնետոմս) տաս և ավելի տոկոսին, կամ իր մասնակցության ուժով կամ տվյալ անձանց միջև կնքված պայմանագրին համապատասխան հնարավորություն ունի կանխորոշել մյուսի որոշումները.

բ. նրանցից մեկի ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի տաս տոկոսից ավելիին տիրապետող կամ օրենքով չարգելված այլ ձևով նրա որոշումները կանխորոշելու հնարավորություն ունեցող մասնակիցը (բաժնետերը) և (կամ) մասնակիցները (բաժնետերերը) կամ նրանց ընտանիքի անդամները (եթե մասնակիցը ֆիզիկական անձ է) իրավունք ունեն ուղղակի կամ անուղղակի կերպով տիրապետել (այդ թվում՝ առուվաճառքի, հավատարմագրային կառավարման, համատեղ գործունեության պայմանագրերի, հանձնարարականի կամ այլ գործարքների հիման վրա) մյուսի՝ ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի տաս տոկոսից ավելիին կամ ունեն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ ձևով վերջինիս որոշումները կանխորոշելու հնարավորություն.

գ. նրանցից մեկի որևէ կառավարման մարմնի կամ նման պարտականություններ կատարող այլ անձանց, ինչպես նաև նրանց ընտանիքի անդամներից որևէ մեկը միաժամանակ հանդիսանում է մյուս անձի որևէ կառավարման մարմնի անդամ կամ նման պարտականություններ կատարող այլ անձ.

դ. նրանք գործել կամ գործում են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից.

Սույն կետի իմաստով ընտանիքի անդամ են համարվում հայրը, մայրը, ամուսինը, ամուսնու ծնողները, տատը, պապը, քույրը, եղբայրը, երեխաները, քրոջ կամ եղբոր ամուսինն ու երեխաները:

**Մասնակիցը պետք է ունենա կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար իրավերով պահանջվող՝**

**1) Տեխնիկական առաջարկ**

**2) Մասնագիտական փորձառություն**

**3) ֆինանսական վիճակի մասին տեղեկատվություն**

**4) Աշխատանքային ռեսուրսներ**

**5) Տեխնիկական միջոցներ**

**6) Երրորդ կողմի համապատասխանության հաստատման թերթիկ (կցվում է)**

**7) ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց Պետական ռեգիստրից քաղվածք, ոչ ավել քան 5 օրվա վաղեմության հայտի ներկայացման պահի դրությամբ:**

**8) Հայտարարություն իրավերով նախատեսված փաստաթղթերի և տեղեկությունների հավաստի լինելու և գերիշխող դիրքի չարաշահման և հակամրցակցային համաձայնության բացակայության մասին: /կցվում է/:**

**1. Տեխնիկական առաջարկ չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով,**

Անհրաժեշտ է ներկայացնել տեխնիկական առաջարկ համաձայն տեխնիկական բնութագրի պահանջների/Տեխնիկական բնութագիրը կցվում է/:

**2. «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝**

Մասնակիցը պետք է հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երկու տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած լինի նմանատիպ առնվազն մեկ պայմանագիր: Կից ներկայացված վերջին երկու տարվա ընթացքում մատակարարված ապրանքների քանակը գումարային արտահայտությամբ պետք է լինի ոչ պակաս քան 15 000 000 /տասնհինգ միլիոն/ ՀՀ դրամը, առանց ԱԱՀ: Հաշվարկը իրականացվում է հայտերի բացման օրվա դրությամբ:

Կից ներկայացնել համապատասխան փաստաթղթերի պատճենները (պայմանագիր, հանձնման-ընդունման ակտ, հաշիվ-ապրանքագիր): Մասնակցի որակավորումը այս

չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն ենթակետով նախատեսված պայմաններն ու պահանջները.

**3. «ֆինանսական վիճակի մասին տեղեկատվություն» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝**

Մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն պայմանագրի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայության մասին: Կից ներկայացնել նախորդ տարվա հաշվեկշռի 1-ին և 2-րդ ձևերը, Շահութահարկի հաշվարկը, ինչպես նաև տեղեկատվություն հայտի ներկայացման օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ: (տեղեկանք հարկային տեսչությունից):

**4. Աշխատանքային ռեսուրսներ չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝**

Մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն անհրաժեշտ աշխատանքային ռեսուրսների առկայության մասին.

Մասնակիցը՝ որպես որակավորման չափանիշի հիմնավորող փաստաթուղթ ներկայացնում է պայմանագրի կատարման համար Մասնակցի կողմից առաջարկվող աշխատակազմի վերաբերյալ տվյալները՝ առաջադրված աշխատակազմում ներգրավված աշխատողների անձնագրերի պատճենները, Աշխատանքային պայմանագրերի պատճենները:

**5. Տեխնիկական միջոցներ չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝**

Մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն անհրաժեշտ Տեխնիկական միջոցների առկայության մասին, կից ներկայացնելով այն հավաստող փաստաթղթերը.

## 3.ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

3.1 Սույն մրցույթին մասնակցելու համար Մասնակիցը Պատվիրատուին է ներկայացնում ընթացակարգի տեխնիկական առաջարկ/այսուհետ հայտ/:

Մրցույթի հայտերը ներկայացվում են մինչև դրա համար սույն հրավերով սահմանված ժամկետի ավարտը:

3.2 Մրցույթի հայտ անհրաժեշտ է ներկայացնել Պատվիրատուին ոչ ուշ, քան մինչև 2021թ. փետրվարի 26-ը, ժամը՝«10:00»-ն, ք. Գորիս, Գր. Տաթևացու 2 հասցեով: Ընթացակարգի հայտերը ստանում և հայտերի գրանցամատյանում գրանցում է գնումների գծով մասնագետ Ա. Նիկոլայանը: Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ գրանցամատյանում նշելով գրանցման համարը, օրը և ժամը: Մասնակցի պահանջով Պատվիրատուն տրամադրում է հայտի ընդունման մասին տեղեկանք: Հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուց հետո ներկայացված հայտերը գրանցամատյանում չեն գրանցվում և դրանք՝ ստանալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում քարտուղարի կողմից վերադարձվում են:

## 4. ՀԱՅՏԵՐԻ/ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ԲԱՑՈՒՄԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Հայտերի բացումը կկատարվի գնահատող հանձնաժողովի (այսուհետև՝ հանձնաժողով) բացման նիստում՝ 2021թ. փետրվարի 26-ը, ժամը՝ «10:30»-ին, ք. Գորիս Գր. Տաթևացու 2 հասցեում:

4.2. Առաջարկի ներկայացման վերջնաժամկետի լրանալուց հետո հանձնաժողովը հավաքվում և բացում է բոլոր ներկայացված առաջարկները: Առաջարկները ներկայացրած ընկերությունների ներկայացուցիչները կարող են ներկա գտնվել հանձնաժողովի կողմից առաջարկները բացելու պահին: Հանձնաժողովը ուսումնասիրում և գնահատում է ներկայացված տեխնիկական առաջարկները, որից հետո հաստատում կամ մերժում է դրանց համապատասխանությունը տեխնիկական պահանջներին, ներառյալ առաքման

ժամը և երաշխիքային պայմանները: Հայտը մերժվելու դեպքում մասնակցին ուղարկվում է էլեկտրոնային ծանուցում, որտեղ նշվում է հայտի մերժման հիմքերը: Հայտի մերժման համար հիմք կարող է հանդիսանալ դրա անհամապատասխանությունը հրավերով սահմանված պահանջների: Հայտը մերժվելու դեպքում մասնակցին ուղարկվում է էլեկտրոնային ծանուցում, որտեղ նշվում է հայտի մերժման հիմքերը: Հայտի մերժման համար հիմք կարող է հանդիսանալ դրա անհամապատասխանությունը հրավերով սահմանված պահանջների:

Այն պարագայում, եթե ներկայացված փաստաթղթերի հիման վրա հնարավոր չէ որոշել առաջարկի համապատասխանությունը, գնումների բաժինը թեկնածուին խնդրում է ներկայացնել հավելյալ մանրամասներ և ապացույցներ:
Տեխնիկական առաջարկն ուսումնասիրելուց և հաստատելուց հետո Հանձնաժողովի քարտուղարը մասնակիցներին ծանուցում է տնտեսական առաջարկների բանակցման գործընթացում ներկայացնելու գնային առաջարկներ՝ Էլեկտրոնային եղանակով: Համակարգը կառավարող կամ գործընթացի դիտորդ հանդիսացող անձը կարող է տեսնել առաջարկված գները միայն առաջարկների ներկայացման վերջնաժամկետի լրանալուց հետո: Առաջարկների ներկայացման վերջնաժամկետի լրանալուց հետո դրանք դասակարգվում են ըստ գնի: Գնային առաջարկների բանակցությունների երկրորդ փուլը կարող է մեկնարկել բոլոր մասնակիցներին պատշաճ կերպով տեղեկացնելուց և նրանցից երկրորդ փուլում մասնակցելու վերաբերյալ գրավոր հաստատում ստանալուց հետո: Այս փուլում Առաջին փուլի (Սկզբնական առաջարկ) ամենացածր առաջարկված գինը հայտարարվում է բոլոր մասնակիցներին՝ առանց տրամադրելու որևէ տեղեկություն այդ գինն առաջարկած մասնակցի մասին: Առավել ցածր ողջամիտ գին առաջարկած մասնակիցը հանձնաժողովի որոշմամբ ճանաչվում է ընտրված մասնակից/ հաղթող: Երկրորդ փուլում առաջարկների ներկայացման ժամկետը լրանալուն պես մշակվում է հաշվետվություն, որտեղ ներկայացված են մրցույթի արդյունքները և Մատակարարի ընտրության առաջարկը: Հաշվետվությունը ստորագրվում է հանձնաժողովի բոլոր անդամների կողմից: Յաշվետվությունը հաստատելուց հետո 5 օրվա ընթացքում մրցույթի բոլոր մասնակիցները պաշտոնապես տեղեկացվում են առաջարկների դասակարգման և Մատակարարի ընտրության մասին:

Մրցույթին վերաբերող ամբողջ տեղեկատվությունն ու փաստաթղթերը արխիվացվում են և կցվում են Պայմանագրին/Գնման պատվերին/:

## 5. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԸ

5.1 Ընտրված մանակցի հետ կնքվում է Պայմանագիր «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ի Գնումների ուղեցույցի համապատասխան, ընտրված մասնակցին մրցույթի արձանագրության ծանուցումից 20 (քսան) աշխատանքային օրվա ընթացքում: Նախքան պայմանագիր կնքելը հաղթող մասնակցին կառաջարկվի ծանոթանալ և հաստատել հակակոռուպցիոն փաստաթղթերը: Ընկերությունը կարող է հրաժարվել Պայմանագիր կնքել հաղթող Ընկերության հետ, եթե վերջինս չհամապատասխանի Ընկերության գործող ընթացակարգերին, որի մասին Հաղթողը կստանա պատճառաբանված մերժում:

## 6. ՀԱՅՏԵՐԸ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ԿԱՐԳԸ

6.1 Մասնակիցը հայտը ներկայացնում է սույն հրավերով սահմանված կարգով:

Հայտը/տեխնիկական առաջարկը/ ներկայացվում է փաստաթղթային ձևով: Մասնակցի առաջարկը, դրան վերաբերող փաստաթղթերը դրվում են ծրարի մեջ, որը սոսնձվում է այն ներկայացնողի կողմից: Ծրարում ներառված փաստաթղթերը /տեղեկությունները/, կազմվում են բնօրինակից/ ներկայացվում է դրանց՝ բնօրինակից պատճենահանված տարբերակը/ և 2 օրինակ պատճեններից: Փաստաթղթերի փաթեթների վրա համապատասխանաբար գրվում են «բնօրինակ» և «պատճեն» բառերը: Ծրարը և հրավերով նախատեսված՝ Մասնակցի կազմված փաստաթղթերը ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորված անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

6.2 Սույն հրահանգի 6.1 կետում նշված ծրարի վրա հայտը կազմելու լեզվով նշվում են

ա) Պատվիրատուի անվանումը և հայտի ներկայացման վայրը (հասցեն).

բ) Մրցութային ընթացակարգի ծածկագիրը.

գ) «չբացել մինչև հայտերի բացման նիստը» բառերը.

դ) մասնակցի անվանումը (անունը), գտնվելու վայրը և հեռախոսահամարը

6.3 Սույն հրահանգի 6.1 և 6.2 կետերի պահանջներին չհամապատասխանող հայտերը հանձնաժողովը հայտերի բացման նիստում մերժում է և նույնությամբ վերադարձնում ներկայացնողին:

| | |
|---|---|
| **«ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ** | **“ContourGlobal Hydro Cascade” CJSC** |
| **Ապրանքների Մատակարարման Պայմանագիր** | **Contract for Supply of Goods** |
| **№__________** | **№__________** |
| Սույն պայմանագիրը (այսուհետ՝ **Պայմանագիր**) կնքվել է ք. Երևանում, 2021թ.-ի _____/_________________ին հետևյալ կողմերի միջև՝ | This Contract (hereinafter referred to as the “**Contract**”) is executed in Yerevan on _____/________________, 2021 by and between: |
| **«ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ**, գրանցված Երևան քաղաքում, Մելիք-Ադամյան 2/2 հասցեում, ՀՎՀՀ՝ 02619957, ի դեմս տնօրեն Արա Հովսեփյանի (այսուհետ՝ **Գնորդ**)<br>և | **“ContourGlobal Hydro Cascade” CJSC**, having its seat and registered office at Yerevan city, 2/2 Melik Adamyan St., registered under TIN: 02619957, represented by Ara Hovsepyan, in his capacity of Director, hereinafter referred to as **Buyer**, and |
| **«------------» -----**, գրանցված ------------- քաղաքում, ----------- հասցեում, ՀՎՀՀ՝ ---------------, ի դեմս տնօրեն --------------- (այսուհետ՝ **Մատակարար**) կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին. | **“------------” -----**, having its seat and registered office at ----------- Str., -------------, registered under TIN:---------------, represented by ---------------, in his capacity of Director, hereinafter referred to as **Supplier**, this contract was signed for the following: |
| **Սահմանումներ.** | **Definitions** |
| Սույն Պայմանագրի շրջանակներում հետևյալ հասկացություններն ու արտահայտությունները ունեն հետևյալ նշանակությունը. | In this Contract, the following words and phrases shall have the following meanings: |
| **Բանկային օր՝** այն օրը (բացառությամբ կիրակի, շաբաթ և պաշտոնական տոն օրերի), երբ Հայաստանում բանկերը աշխատում են սովորական բանկային գործարքներ իրականացնելու համար: | **Business Day**- a day (other than a Saturday or a Sunday or official holiday) on which banks are generally open for the conduct of normal banking business in Armenia. |
| **Ապրանք՝** սույն պայմանագրի շրջանակներում մատակարարվող -------------՝ համաձայն առաջարկի և տեխնիկական բնութագրի, որոնք կցված են սույն | **Goods**- ---------- to be delivered under this Contract as per offer and technical specification |

| | |
|---|---|
| Պայմանագրին որպես հավելվածներ (Հավելված 2 և 3): | attached to this Contract as annexes (Annex 2 and 3). |
| **Երաշխիքային ժամկետ**<br>Ժամկետ, որի ընթացքում Մատակարարը պարտավորվում է Ապրանքի և/կամ դրա ցանկացած մասի/մասերի հետ կապված Թերություններ ի հայտ գալու դեպքում վերացնել դրանք կամ փոխարինել Թերությամբ Ապրանքը նոր Ապրանքով՝ սույն Պայմանագրով սահմանված կարգով և պայմաններով. | **Warranty Period-** the period of time during which in case Deficiencies arise in regard with the Goods and/or any part(s) thereof, the Supplier shall eliminate such Deficiencies in the Goods or replace the defective Goods, as set forth by the present Contract. |
| **Թերություններ`** ապրանքի վնասվածք և/կամ թերություն և/կամ անսարքություն և/կամ անհամապատասխանություն(ներ) սույն Պայմանագրով սահմանված Օգտագործման Նպատակին և/կամ սույն Պայմանագրին և/կամ կիրառվող օրենսդրության պահանջներին և/կամ սովորաբար այդպիսի Ապրանքին ներկայացվող պահանջներին և/կամ Ապրանքի Փաստաթղթերին և/կամ սույն Պայմանագրի Հավելված 2-ում ներկայացված Ապրանքի բնութագրին և տեխնիկական պահանջներին: | **Deficiencies** - any default and/or defect and/or malfunctioning and/or non-compliance(s) of the Goods to the Purpose defined by this Contract and/or to applicable legislation requirements and/or to requirements which are usually presented to such Goods and/or to Documentation of the Goods and/or to the technical characteristics and technical requirements, as defined in Annex 2 of this Agreement . |
| **Փաստաթղթեր`** ամբողջ գրավոր տեղեկատվությունը, տեխնիկական անձնագիրը, որակի հավաստագիրը, շահագործման վերաբերյալ հրահանգները, գծագրերը, շահագործման ձեռնարկները և այլ փաստաթղթեր, որոնք անհրաժեշտ են Ապրանքի օգտագործման, տեղադրման և/կամ օգտագործման համար, եթե Կողմերը համաձայնվել են Մատակարարի կողմից նման Փաստաթղթերի տրամադրման մասին: | **Documentation-** all written information, technical passport, certificate of quality, instructions for exploitation, schemes, exploitation commands, and other documentation, which is necessary for the use, installation and/or functioning of the Goods if Parties agreed on this Documentation provision by the Supplier, |
| **Ընդունման-Հանձնման Ակտ**<br>Սույն Պայմանագրի համաձայն Մատակարարի կողմից Ապրանքի հանձնումը և Գնորդի կողմից դրա ընդունումը հավաստող և Կողմերի կողմից ստորագրված փաստաթուղթ: | **Acceptance Protocol** - a document executed between the Parties which certifies the proper delivery of the Goods by the Supplier and acceptance of them by the Buyer. |
| **Օգտագործման Նպատակ** | **Purpose** |

| | |
|---|---|
| Ապրանքը օգտագործվելու է Հավելված 2-ին համապատասխան: | The Goods will be used by the Buyer in accordance with Annex 2. |
| **1. Պայմանագրի առարկան** | **1. Subject of the contract** |
| **1.1.** Մատակարարը պարտավորվում է Գնորդին որպես սեփականություն հանձնել սույն Պայմանագրի Հավելվածներ 2-ով և 3-ով սահմանված պայմաններին համապատասխանող Ապրանք, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել Ապրանքը և վճարել դրա դիմաց սույն Պայմանագրով նախատեսված չափով և կարգով: | **1.1.** Under this Contract the Supplier shall transfer the Goods that correspond to the terms foreseen in the Annexes 2 and 3 of this Contract to the property of the Buyer, and the Buyer shall accept the Goods and pay for them, in accordance with the terms and conditions set forth in this Contract. |
| **2. Գինը և վճարումը** | **2. Price and payment** |
| 2.1 Ապրանքների ընդհանուր գինը կազմում է ----------- (-------------) ՀՀ դրամ, առանց ԱԱՀ: Գինը ներառում է Ապրանքի առաքումը Պատվիրատուի տարածք, ինչպես նաև փոխադրման, մաքսազերծման և ապահովագրման բոլոր ծախսերը, հարկերը և տուրքերը: | 2.1. The Contract Price of the Goods amounts to AMD ------------ (------------) excluding VAT. The price includes delivery of the Goods to the Buyer’s Site and all transportation costs including, customs expenses and fees, taxes, and insurances. |
| 2.2 Ապրանքի համար վճարումը կատարվում է Ընդունման-Հանձնման Ակտը երկկողմանի ստորագրելուց հետո 15 օրվա ընթացքում՝ ներկայացված և հաստատված հաշիվ-ապրանքագրի և Ընդունման-Հանձնման Ակտի հիման վրա: | 2.2. The payment for the Goods shall be completed within 15 days from mutual signing of Acceptance Protocol, based on presented and signed invoice and Acceptance Protocol. |
| 2.3 Սույն Պայմանագրի շրջանակներում կատարվելիք բոլոր վճարումները իրականացվում են բանկային փոխանցման միջոցով՝ ՀՀ դրամով: Մատակարարի բանկային վճարները կատարում է Մատակարարը, իսկ Պատվիրատուի բանկային վճարները կատարում է Պատվիրատուն: | 2.3. All payments according to this Contract shall be made through bank transfers in AMD. The bank fees at the Supplier’s bank are at the Supplier’s expense, the bank fees at the Buyer’s bank are at the expense of the Buyer. |
| **3. Առաքման պայմաններն ու ժամկետները** | **3. Terms of delivery** |
| 3.1. Ապրանքը առաքվում է ------ մասնաբաժնով: | 3.1. The Goods shall be delivered in -------- delivery. |
| 3.2 Մատակարարը պարտավորվում է Ապրանքը մատակարարել Գնորդին սույն Պայմանագրի երկկողմանի ստորագրման պահից ------- (----------) օրվա ընթացքում: | 3.2 The Supplier is obliged to supply the Goods to the Buyer within ---------- (---------) upon bilateral signature of this Contract. |

| | |
|---|---|
| 3.3 Ապրանքի նկատմամբ սեփականության իրավունքը և ռիսկերը Գնորդին են փոխանցվում Ընդունման-Հանձնման Ակտը ստորագրելու պահից: | 3.3 The ownership rights and risks are passing to the Buyer upon signature of the Acceptance Protocol. |
| 3.4 Մատակարարը, Ապրանքը Գնորդին հանձնելիս, դրա հետ միաժամանակ Գնորդին պետք է հանձնի նաև դրա պատկանելիքները, ինչպես նաև դրան վերաբերող բոլոր Փաստաթղթերը: | 3.4 The Supplier shall pass the Goods with all its accessories, as well as with all Documentation. |
| 3.5 Մատակարարվող ապրանքը առաքվելու է հետևյալ հասցեով.<br>ՀՀ, ք. Գորիս, Տաթևացու 2, ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ ՓԲԸ: | 3.5 The Goods shall be delivered to the following address: ContourGlobal Hydro Cascade CJSC, 2 Tatevatsi Street, Goris, Armenia. |
| 3.6 Մատակարարը պարտավորվում է տեղեկացնել Պատվիրատուին առաքման ամսաթվի մասին առաքումից առնվազն մեկ օր առաջ հետևյալ էլեկտրոնային հասցեով.<br>aram.melkumyan@contourglobal.com | 3.6 The Supplier shall notify the Buyer of the delivery date no later than one day prior to the day of delivery to the following email:<br>aram.melkumyan@contourglobal.com |
| **4. Ընդունում** | **4. Acceptance** |
| 4.1 Ընդունման-Հանձնման Ակտը ստորագրվում է Գնորդի կողմից, եթե Ապրանքը առաքվել է պատշաճ և ամբողջությամբ Հավելված 2-ին համապատասխան, ներառյալ բոլոր հայտնաբերված Թերությունների վերացումը: | 4.1 Acceptance Protocol shall be signed by the Buyer if the Goods are delivered properly and in full in compliance with Annex 2, including elimination of all discovered Deficiencies. |
| 4.2 Ապրանքների ընդունումը չի սահմանափակում Գնորդի իրավունքները երաշխիքային սպասարկման հետ կապված: | 4.2 The acceptance of the Goods shall be without prejudice to warranty rights of the Buyer under this Contract. |
| 4.3 Այն դեպքում, երբ Ապրանքի ստուգման արդյունքում հայտնաբերվում են Թերություններ, Կողմերը կնքում են Թերությունների համատեղ ակտ: Թերությունները հայտնաբերելու դեպքում Գնորդը կարող է Մատակարարից պահանջել ողջամիտ ժամկետում, բայց ոչ ավել քան 15 օրվա ընթացքում անհատույց վերացնելու Ապրանքի Թերությունները կամ պահանջել փոխարինել Թերությամբ Ապրանքը նոր Ապրանքով և/կամ պահանջել համաչափորեն նվազեցնել Ապրանքի գինը և/կամ Թերությունների վերացումը Մատակարարի հաշվին կամ Ապրանքի առաքումը հանձնարարել այլ անձանց: | 4.3 If during acceptance of Goods any Deficiencies are discovered, mutual deficiencies act should be executed. In that case the Buyer is entitled at its discretion to require elimination of the Deficiencies or replacement of the Goods with Deficiencies within a reasonable term, but not more that within 15 days and/or to require proportional reduction of the price of the Goods and/or assign the elimination of the Deficiencies or delivery of the Goods to third persons at the cost of Supplier. |
| 4.4 Թերությունները վերացնելուց հետո Ապրանքի ստուգումը և ընդունումը իրականացվում է նույն | 4.4 After the elimination of the Deficiencies the acceptance is made in the same way as for the initial delivery. |

| | |
|---|---|
| կարգով, ինչպես սկզբնական մատակարարման ընդունումը: | |
| 4.5. Եթե մատակարարված Ապրանքի մի մասն է Թերությամբ, Գնորդն իրավունք ունի ընդունել միայն այն Ապրանքը, որը չունի Թերություններ: | 4.5 If only part of the Goods is with Deficiencies, the Buyer is entitled to accept only the Goods which are without Deficiencies. |
| 4.6. Ապրանքից հրաժարվելու դեպքում, դրա համար սույն Պայմանագրով վճարվելիք գումարը ենթակա չէ վճարման, իսկ վճարված լինելու դեպքում ենթակա է վերադարձման ողջամիտ ժամկետում, բայց ոչ ավելի քան Գնորդի կողմից այդպիսի պահանջ ներկայացնելու պահից 10 (տաս) օրվա ընթացքում: Հրաժարված Ապրանքի հետ կապված ծախսերը և ռիսկերը կրում է Մատակարարը: Մատակարարը պարտավոր է իր հաշվին և պատասխանատվությամբ ետ վերցնել այդպիսի Ապրանքը: | 4.6 In case the Buyer rejects the Goods, the price will then not be due for payment. The payments that the Supplier may possibly have already received for the rejected Goods must be refunded to the Buyer within 10 (ten) days upon receipt of the request of the Buyer. The cost and risks incurred in relation to such rejected Goods shall be borne by the Supplier. The Supplier at its own cost and liability must take the rejected Goods back. |
| 4.7. Այն դեպքում, երբ Թերություն ունեցող Ապրանքի համար Գնորդը պահանջում է Թերությունների վերացում կամ Ապրանքի փոխարինում պատշաճ Ապրանքով, այդպիսի Ապրանքի համար վճարումը չի կատարվում մինչև դրանց պատշաճ մատակարարումը Մատակարարի կողմից և ընդունումը Գնորդի կողմից: | 4.7 In the event for the Goods with Deficiencies the Buyer requests elimination of Deficiencies or replacement of the Goods with Deficiencies with proper Goods, the payment for such Goods shall not be made until the Goods with Deficiencies are properly delivered by the Supplier and accepted by the Buyer. |
| **5. Երաշխիքային ժամկետ** | **5. Warranty period** |
| 5.1. Սույն պայմանագրի առարկա հանդիսացող Ապրանքների երաշխիքային ժամկետը կազմում է. | 5.1 The warranty period of the delivered Goods subject to this Contract shall be. |
| • ---------- | • ------------ |
| Երաշխիքային ժամկետը հաշվարկվում է Պատվիրատուի կողմից ապրանքն ընդունելու և Ընդունման-Հանձնման Ակտը Գնորդի կողմից ստորագրման ամսաթվից: | The warranty period is calculated from the date of acceptance of the Goods and signature of the Acceptance Protocol by the Buyer. |
| 5.2 Երաշխիքային ժամկետի ընթացքում Մատակարարը պարտավոր է ՝ | 5.2 Within Warranty Period the Supplier is obliged to: |
| 5.2.1. վերացնել Ապրանքի կամ դրա բաղկացուցիչ մասի/մասերի ցանկացած տեսակի, ձևի, բնույթի Թերություն. | 5.2.1 eliminate Deficiencies of any kind, nature, form of the Goods or of any part thereof. |
| 5.2.2. իրականացնել անսարք Ապրանքի կամ դրա բաղկացուցիչ մասի/մասերի փոխարինումը պատշաճ որակի նույն Ապրանքով. | 5.2.2 perform repair or replacement of the defective Goods or of any part thereof with the same Goods of proper quality; |

| | |
|---|---|
| 5.2.3. իր հաշվին իրականացնել Ապրանքի կամ դրա այն մասի/մասերի փոխարինումը, որը ճանաչվել է թերի Գնորդի կողմից: | 5.2.3 perform at its own expenses the repair of the Goods or any part thereof which has been proven to be defective by the Buyer. |
| 5.3. Թերություն ունեցող Ապրանքի կամ դրա բաղկացուցիչ մասի/մասերի Երաշխիքային Ժամկետը երկարաձգվում է այն ժամանակով, որի ընթացքում Ապրանքը կամ դրա բաղկացուցիչ մասը/մասերը չի կարող օգտագործվել դրանում հայտնաբերված Թերությունների պատճառով: Փոխարինված Ապրանքի կամ դրա մասի համար սահմանվում է նույն չափով Երաշխիքային Ժամկետ, ինչ սկզբնական Ապրանքի համար՝ հաշվարկված սույն Պայմանագրով սկզբնական Ապրանքի համար սահմանված կարգով: | 5.3 The Warranty Period of the Goods with Deficiencies or of any part(s) thereof is prolonged for the period within which the Goods cannot be used due to discovered Deficiencies. The Warranty period for the replaced Goods or of any part(s) thereof shall be the same as for original Goods calculated as set forth in this Contract for the initial Goods. |
| 5.4 Կողմերը համաձայնության են գալիս այն մասին, որ Թերությունների ուղղումը Երաշխիքային Ժամկետի ընթացքում իրականացվում է առանց Գնորդի կողմից որևէ վճարի՝ Մատակարարի հաշվին: | 5.4 The correction of the Deficiencies within the Warranty period is carried out at no cost by the Buyer, at the expenses of the Supplier. |
| 5.5 Երաշխիքային ժամկետի ընթացքում Թերությունների վերացումը կամ Ապրանքի կամ դրա մասի/մասերի փոխարինումը իրականացվում է ողջամիտ ժամկետում, բայց ոչ ավել քան 15 օրում: | 5.5 The elimination of the Deficiencies or replacement of Goods with Deficiencies or any part thereof within Warranty period is to be done within reasonable timeframe, but no more than within 15 days. |
| 5.6 Մատակարարը երաշխավորում է, որ սույն Պայմանագրով Գնորդին հանձնվող Ապրանքը լիովին համապատասխանում է սույն Պայմանագրով սահմանված պահանջներին և պայմաններին: | 5.6 The Supplier warrants that the Goods supplied to the Buyer under this Contract fully correspond to the requirements and terms as defined by this Contract. |
| **6. Կողմերի պատասխանատվությունը** | **6. Responsibilities of the Parties** |
| 6.1 Գնորդն իրավունք ունի Մատակարարի՝ սույն Պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետը խախտելու դեպքում, կետանցի յուրաքանչյուր օրվա համար պահանջել վճարել տույժ՝ մատակարարվող Ապրանքի ընդհանուր գնի 0.2 տոկոսի չափով: | 6.1 For violation of the supply terms defined by this Contract the Buyer is entitled to require from the Supplier to pay a penalty for delinquency of each day in the amount of 0.2% of the total price of the Goods. |
| 6.2 Եթե Մատակարարը չի պահպանում Ապրանքի Թերությունների վերացման կամ Թերությամբ Ապրանքը նոր Ապրանքով փոխարինելու ժամկետը, Գնորդն իրավունք ունի պահանջել վճարել տույժ ուշացման յուրաքանչյուր օրվա համար | 6.2 In the event the Supplier does not respect the term for elimination of the Deficiencies or replacement of the Goods with Deficiencies in the defined timelines, the Buyer is entitled to request a payment of penalty for each day of |

| | |
|---|---|
| մատակարարվող Ապրանքի ընդհանուր գնի 0,1 տոկոսի չափով մինչև Թերությունների ամբողջական վերացումը: | delay in the amount of 0.1 % of the total price of the Goods until full elimination of the Deficiencies. |
| **7. Պայմանագրի դադարեցում** | **7. Contract termination** |
| 7.1 Գնորդը իրավունք ունի ցանկացած ժամանակ միակողմանի հրաժարվել սույն Պայմանագրից այդ մասին 7 (յոթ) օր առաջ տեղեկացնելով Մատակարարին՝ առանց հետագա ֆինանսական և այլ պարտավորության, բացառությամբ չկատարված պարտավորությունների, որոնց մասով Պայմանագիրը դադարում է դրանց ամբողջական կատարման պահից: | 7.1 The Buyer has the right to unilaterally terminate this Contract at any time with 7 (seven) days prior written notice to the Supplier without any further financial or other obligations, except for non-executed obligations, for which this Contract shall terminate upon full execution. |
| 7.2 Մատակարարի կողմից սույն Պայմանագրի որևէ դրույթ խախտելու դեպքում, Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծել սույն Պայմանագիրը՝ այդ մասին 7 օր առաջ գրավոր ծանուցելով Գնորդին և նրան տրամադրելով իր հայեցողությամբ մինչև 30 (երեսուն) օր ժամանակ թերությունները վերացնելու համար: Եթե Գնորդը չի վերացնում խախտումը սահմանված ժամկետում, ապա Պայմանագիրը լուծված է համարվում թերությունները վերացնելու ժամկետը լրանալու պահից, առանց որևէ այլ իրավական ձևակերպումներ կատարելու կամ դատարան դիմելու անհրաժեշտության: | 7.2 In the event of breach of any of the conditions of this Contract by the Supplier, the Buyer may unilaterally terminate this Contract by giving a Supplier 7 days prior written notice and allowing at its discretion up to 30 (thirty) days to cure the breach. The Contract shall terminate on expiration of the cure period if the Supplier has failed to cure the breach, with no other formalities or court intervention being required. |
| 7.3 Սույն Պայմանագրի լուծման պահից Կողմերի բոլոր հետագա իրավունքներն ու պարտավորությունները դադարում են, բացառությամբ Կողմերի 1) սույն Պայմանագրի լուծման օրվա դրությամբ կամ դրանից հետո վճարման ենթակա բոլոր գումարների, 2) սույն Պայմանագրով սահմանված որևէ այլ պարտավորության, որը ուժի մեջ է մտնում լուծման ամսաթվից հետո կամ որը պետք է կատարվի Պայմանագրի լուծման հետ կապված կամ դրա հետևանքով կամ որի գործողությունը շարունակվում է Պայմանագրի լուծումից հետո (օր.՝ երաշխիքի և երաշխիքային սպասարկման հետ կապված պարտավորություններ և այլն): Սույն Պայմանագիրը դադարեցվում է | 7.3 Upon termination of this Contract all further rights and obligations of the Parties shall cease, except that the Parties shall not be relieved of (i) its obligation to make any payments due, or to become due, as of or after the date of termination, (ii) any other obligation set forth in this Contract which is to take effect after the date of termination or which shall be executed in connection or as a result of termination of the Contract or which continues its execution after termination of this Contract (e.g. obligations regarding warranty and warranty service, etc.). |

| | |
|---|---|
| 7.4 Սույն Պայմանագրի 7.2 կետով սահմանված հիմքով Պայմանագրի լուծման դեպքում Գնորդն իրավունք ունի Մատակարարից պահանջել 6.1 կետով սահմանված տույժը: | 7.4 In case of termination of the Contract as per Clause 7.2 the Buyer shall be entitled to receive the penalties foreseen in Clause 6.1. |
| **8. Ֆորս մաժոր** | **8. Force majeure** |
| 8.1 Կողմերն ազատվում են սույն Պայմանագրով սահմանված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պատասխանատվությունից, եթե դա տեղի է ունեցել ֆորս մաժորի ազդեցության պատճառով, որն առաջացել է սույն Պայմանագրի ստորագրումից հետո և որը Կողմերը չէին կարող կանխատեսել և կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են համարվում. երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, արտակարգ կամ ռազմական դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, հաղորդակցման ուղիների խափանումը, կառավարական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե ֆորս մաժորի ազդեցությունը տևում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրը կարող է միակողմանի հրաժարվել սույն Պայմանագրից՝ նախապես այդ մասին տեղյակ պահելով մյուս Կողմին: | 8.1 The Parties shall be exonerated from the liability for non-execution or half execution of the obligation envisaged by this Contract if it is the result of the force majeure influence which has arisen after signing this Contract and which Parties could not foresee and prevent. The mentioned situations are earthquake, inundation, fire, war, declaration of state of emergency or martial law, political movements, termination of the means of communication work, governmental bodies' acts, etc., which make impossible the execution of the obligations foreseen in this Contract. If the force-majeure continues more than 3 (three) months each Party is entitled to terminate this Contract with a prior notice. |
| **9. Լրացուցիչ դրույթներ** | **9. Supplementary provisions** |
| 9.1 Սույն Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի կողմից պարտավորությունների ամբողջական կատարումը: | 9.1 This Contract shall enter into force from the moment of its signature and remains in force till full performance of its obligations by the Parties. |
| 9.2 Սույն Պայմանագիրը կարող է փոփոխվել կամ լրացվել միայն երկու Կողմերի կողմից քննարկված և ստորագրված առանձին համաձայնությամբ: | 9.2 The amendments and additions to this Contract shall be discussed by the Parties mutually and defined in a separate agreement. |
| 9.3 Կողմերը պարտավորվում են իրենց հասցեների, բանկային վավերապայմանների, ինչպես նաև | 9.3 The Parties shall inform each other about address, bank requisites change as well as their reorganization within one- week period. |

| | |
|---|---|
| վերակազմակերպման դեպքում միմյանց տեղյակ պահել մեկ շաբաթվա ընթացքում: | |
| 9.4 Սույն Պայմանագիրը կնքվում է հայերեն և անգլերեն լեզուներով, 2 (երկու) օրինակից, որոնցից յուրաքանչյուրն ունի հավասար իրավաբանական ուժ: Տարբերակների միջև անհամապատասխանության դեպքում գերակայում է հայերեն տարբերակը: Կողմերից յուրաքանչյուրին տրվում է սույն Պայմանագրի մեկ օրինակ: | 9.4 This Contract is made in Armenian and English languages, in 2 (two) originals of equal force. In case of inconsistencies between the English and Armenian versions, the Armenian version shall prevail. Each Party to the Agreement is given an original. |
| 9.5 Կոռուպցիայի, փողերի լվացման և ֆինանսական հանցագործությունների դեմ միջոցներ: | 9.5 “Anti-Corruption, Money Laundering, and Financial Crimes. |
| ա. Մատակարարը ներկայացնում և երաշխավորում է, որ ոչ Մատակարարը, ոչ էլ նրա տնօրեններից որևէ մեկը, աշխատակիցները, դուստր ձեռնարկությունները, գործակալները կամ ներկայացուցիչները (հավաքականորեն՝ «Փոխկապակցված անձինք»). I) պաշտոնապես չեն մեղադրվել կամ դատապարտվել որևէ ֆինանսական հանցագործության համար. (ii) չի ենթարկվել որևէ հետաքննության կամ ներգրավված եղել որևէ պաշտոնյայի կամ կառավարության ներկայացուցչի, կամ ստորաբաժանման, գործակալության կամ լծակի (որը ներառում է տարածաշրջանային կառավարման մարմինը կամ պետական պատկան մարմինները) օգտին որևէ վճարման կամ արժեքավոր իր տալու, կամ միջազգային հանրային կազմակերպության (օրինակ՝ Համաշխարհային բանկ, Եվրոպական համայնք կամ Աֆրիկյան զարգացման բանկ), կամ որևէ քաղաքական կուսակցության կամ կուսակցության պաշտոնյայի, կամ քաղաքական գրասենյակի թեկնածուի (վերը նշված «Կառավարության պաշտոնատար անձ») որևէ առաջարկի, վճարման կամ նվերի, վճարման խոստումի հետ կապված հարցման կամ վարույթի մեջ (պաշտոնական կամ ոչ պաշտոնական), (iii) ներկայումս կամ ապագայում սույն Պայմանագրի գործողության ընթացքում աշխատանքի է ընդունելու որևէ Կառավարության պաշտոնյայի, կամ վերջինիս | a. Supplier presents, warrants and agrees that neither Supplier nor any of its principals, employees, affiliates, agents or representatives (collectively, “Associates”): (i) has been formally charged or convicted of any financial crime; (ii) is or was the subject of any investigation, inquiry or proceeding (whether formal or informal) relating to any offer, payment, or gift, promise to pay, or authorization of the payment of anything of value to or for the benefit of any officer or employee of a government, or any department, agency or instrumentality thereof (which includes a regional governmental body or a government-owned business), or of a public international organization (such as the World Bank, the European Community or the African Development Bank), or any political party or party official or a candidate for a political office (any of the foregoing a “Government Official”); or (iii) is currently or will become, or currently employs or will employ, during the term hereof, any Government Official or any family member or close business associate of any Government Official. |

| | |
|---|---|
| ընտանիքի որևէ անդամի կամ որևէ Կառավարության պաշտոնյայի մերձավոր գործընկերոջ: | |
| բ. Մատակարարը հավաստում և երաշխավորում է, որ ինքը և իր գործընկերները ծանոթ են և հասկանում են Եվրամիության, Մեծ Բրիտանիայում և ԱՄՆ-ում գործող հակակոռուպցիոն, կաշառակերության դեմ պայքարի, հակաահաբեկչության և փողերի լվացման ու կիրառելի նմանատիպ օրենքների դրույթներին, այդ թվում, առանց սահմանափակման, ԱՄՆ-ի Արտաքին Կոռուպցիոն Դրսևորումների Ակտին, Մեծ Բրիտանիայի Կաշառակերության Դրսևորումների 2010թ-ի Ակտին, Միջազգային Բիզնես Գործարքներում Օտարերկրյա Պետական Պաշտոնյաների Կաշառակերության Դեմ Պայքարի ՏՀԶԿ կոնվենցիային (հավաքականորեն, որ «կաշառակերության դեմ պայքարի օրենքներ»): Սույն պայմանագրով սահմանված աշխատանքների կատարման համար և սույն պայմանագրի ողջ ընթացքում Մատակարարն իր և իր գործընկերներից յուրաքանչյուրի համար առաջադրում և շարունակելու է առաջադրել լիովին համապատասխանել Կաշառառության Դեմ Պայքարի բոլոր օրենքներն (առանց հաշվի առնելու յուրաքանչյուր գործի համար նման օրենքների իրավական պահանջները): Բացի այդ, Մատակարարը համաձայնում է, որ անմիջապես տեղեկացնի Գնորդին այն մասին, եթե Մատակարարի ընտանիքի որևէ անդամ, մոտ բիզնես գործընկերը կամ որևէ գործընկեր ստանձնի որևէ պաշտոն: Նման դեպքում, Մատակարարն համաձայնում է, որ Գնորդն իրավունք ունի, իր հայեցողությամբ, Մատակարարին պարտադրել համապատասխան սահմանափակումներ՝ ապահովելու համապատասխանությունը կաշառառության դեմ օրենքների պահանջներին: | b. Supplier represents and warrants that it and its Associates are familiar with and understand the provisions of the applicable European Union, UK, and U.S. anti-corruption, anti-bribery, anti-terrorism and anti-money laundering and similar laws, including without limitation the U.S. Foreign Corrupt Practices Act, the UK Bribery Act 2010, the Brazil Clean Companies Act (Law 12,846) and the OECD Convention on Combating Bribery of Foreign Public Officials in International Business Transactions (collectively, the "Anti-Bribery Laws"). In rendering its services pursuant to this Agreement, Supplier has caused itself and each of its Associates and will, throughout the term of this Agreement, continue to cause itself and each of its Associates, to comply fully with all Anti-Bribery Laws (without regard in each case to the jurisdictional requirements of such laws). In addition, Supplier agrees that it will immediately inform Buyer in the event that any family member or close business associate of Supplier or any of its Associates becomes a Government Official. In such event, Supplier agrees that Buyer shall have the right, in its sole discretion, to impose the appropriate restrictions on Supplier to ensure compliance with the Anti-Bribery Laws. |
| գ. Մատակարարը համաձայնվում է կատարել և համապատասխանել Գնորդի Հակակոռուպցիոն քաղաքականությանը (ներառյալ ՔոնթուրԳլոբալի | c. Supplier agrees to execute and comply with Buyer's Anti-Corruption Policy (including the ContourGlobal Anti-Corruption Compliance Guide which is attached hereto). |

| | |
|---|---|
| Հակակոռուպցիոն համապատասխանության ուղեցույցը, որը կցվում է սույն պայմանագրին)։ | |
